ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀՌՈՄՈՒՄ

ՍԻԼՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Թեպետ մշակույթի մասին գիտությունը՝ մշակութաբանությունը, համեմատաբար երիտասարդ գիտաճյուղ է, սակայն դարեր ի վեր մշակույթի ֆենոմենը եղել է իմաստասերների խորհրդածության առարկան։ Դեռևս Հին Արևելքում մտածողները փորձել են հասկանալ, թե ինչն է մարդուն տարբերում մնացյալ կենդանի էակներից, և մարդն ինչպես կարող է իր բնատուր ձիրքերը զարգացնել աշխատանքի ու կարգապահության շնորհիվ։ Հին Չինաստանի մեծագույն մտածողներից մեկը՝ Կոնֆուցիոսը, առաջ է քաշել «*ժեն*»-ի գաղափարը, այսինքն՝ մարդու կողմից սեփական առաքինությունները նպատակամղված մշակելու մասին դրույթը, որը մարդկային մտքի պատմությանը հայտնի ամենահին ակնարկներից է։ Հին Հնդկաստանում մարդկության պատմության մեջ առաջին անգամ խորհրդածության առարկա է դարձել տեքստը՝ «*Վեդաները*»։ Մեր թվարկությունից առաջ, VIII դարից սկսած, մի քանի հարյուրամյակ շարունակ դրանք մեկնաբանվել են «*Ուպանիշադներում*»՝ դրանով իսկ սկիզբ դնելով մետատեքստային վերլուծությանը կամ տեքստի մասին տեքստերի, այսինքն՝ մեկնության արվեստին։

Բայցևայնպես, մշակույթի մասին համակողմանի իմաստասիրական խոսույթը ձևավորվել է Հին Հունաստանում և Հռոմում՝ մեծապես ազդելով ժառանգորդ մշակույթների, այդ թվում նաև հայոց իմաստասիրական մտքի զարգացման վրա։ Պատահական չէ, որ Խորենացին Հունաստանը համարում է «*մայր կամ դայեակ իմաստից*»[1], իսկ Մաշտոցի՝ Աստվածաշնչից թարգմանած առաջին նախադասությունը՝ «*Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ*», ցույց է տալիս մեր նախնիների մշակութային ծրագիրը. ճանաչել իմաստություն, իմաստնանալ, ճանաչել խրատ՝ հետևել բարոյականին, իմանալ հանճարի՝ մտքի, բանականության խոսքերը, այսինքն՝ բռնել լուսավորության, կրթության ուղին, կրթության շնորհիվ մշակութայնացման ուղին[2]։ Ցավոք, պատմության ընթացքում միշտ չէ, որ մեր

[1] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1827, էջ 18։

[2] Այդ ծրագիրն իրագործվում է հունաբան դպրոցի գործունեության շնորհիվ, որի մասին առավել մանրամասն տե՛ս **Аревшатян С. С.** Формирование философской науки в древней Армении, Ер., 1973, էջ 141-242։ Իսկ Հ. Գևորգյանն այսպես է գնահատում այդ ծրագրի արդյունքները. «Ստեղծվեց հայերեն մի ամբողջ գրականություն և բարձրար-

նախնիները հետևել են այդ ծրագրին, և դա է պատճառը, որ պատմահայր Մովսես Խորենացին քննադատել է նրանց «անիմաստասեր բարքի» համար[3]: Այդուհանդերձ, հայոց իմաստասիրական մշակույթի հիմքը հունահռոմեական փիլիսոփայության մեջ բյուրեղացած հոգու խնամքի մշակույթն է, որի համակողմանի վերլուծության մի փորձ կարվի ստորև:

Հետաքրքրական է, որ արդի գիտությանը բազմաթիվ եզրույթներ պարգևած հունարենում «մշակույթ» հասկացությունն արտահայտող որոշակի եզրույթ չկար, և հին հույները մշակույթի մասին խոսելու համար օգտագործում էին «տեխնե» և «պայդեյա» եզրերը: Հին հունարեն «տեխնե»-ին հայերենում համապատասխանում են «արվեստ» և «արհեստ» բառերը: «Տեխնե» ասելով հին հույները հասկանում էին ինչ-որ բան անելու (տնտեսավարելու, կառավարելու, նավ կառուցելու և այլն) կարողությունը, որը պարունակում է և՛ գիտելիքի տարրը, և՛ հմտությունը: Քսենոփոնը վկայում է, որ, ըստ Սոկրատեսի, տեխնեի բարձրագույն աստիճանը «*բազիլիկե տեխնեն*» է՝ թագավորելու, կառավարելու արվեստը: Քսենոփոնն այսպես է գրում այդ մասին.

«*Այնժամ Սոկրատեսը հարցրեց. «Ով Եվթիդեմոս, արդյո՞ք դու ձգտում ես այն առաքինության, որի շնորհիվ մարդիկ դառնում են քաղաքական գործիչներ, տնտեսագետներ, հմուտ ղեկավարներ և ընդհանրապես օգտակար և՛ իրենց, և՛ այլոց համար»: Եվ Եվթիդեմոսը պատասխանեց. «Այո, ով Սոկրատես, ես այդպիսի առաքինության եմ ձգտում»: «Զնսը վկա, - ասաց Սոկրատեսը, - դու ձգտում ես վեհագույն և ամենակարևոր առաքինության: Քանզի այն հատուկ է թագավորներին և կոչվում է «թագավորական»: Արդ դու մտածե՞լ ես այն մասին, թե չի կարելի առաքինի լինել, չլինելով արդարամիտ*»: «*Անշուշտ, - պատասխանեց Եվթիդեմոսը, - չի կարելի առաքինի քաղաքացի դառնալ առանց արդարամտության*»[4]:

Նկատենք, թե որքան է կարևորվում արդարամտությունը կառա-

վեստ թարգմանություններով ու հայ հեղինակների աշխատություններով ներկայացավ հելլենական կրթության ամբողջ համակարգը» (**Հ. Ա. Գևորգյան,** *Քրիստոնեության ընդունումը Հայաստանում պատմության փիլիսոփայության տեսանկյունից* // Փիլիսոփայություն: Պատմություն: Մշակույթ, «Գիտություն» հրատ., Եր., 2005, էջ 93):

[3] Տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 19-20: Աշխարհաբար թարգմանությունը՝ **Մովսես Խորենացի**, *Հայոց պատմություն*, թարգմ., ներած. և ծան. Ս. Մալխասյանի, Եր., 1981, էջ 95-96: Աշխարհաբար թարգմանության մեջ շատ դեպքերում գրաբարյան «իմաստութիւն» բառը փոխարինվել է «գիտությամբ», իսկ «իմաստասիրեցեալքն» «ուսումնասիրողներ» բառով՝ այդպիսով ստվերելով Խորենացու երկում իմաստասիրականի նշանակության հանգամանքը (այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Ս. Ս. Պետրոսյան,** *Իմաստասիրությունը որպես հայոց մշակութային ինքնության գոյացնող բաղկացուցիչ* // Հայ փիլիսոփայությունը ազգային ինքնության հարացույցների կառուցարկման ու արդիականացման համատեքստում: Հայոց ինքնության հարցեր, պրակ 4, ԵՊՀ հրատ., Եր., 2017, էջ 104-105):

[4] **Քսենոփոն**, *Հուշեր Սոկրատեսի մասին*, IV, II, 11 // **Քսենոփոն**, Սոկրատյան երկեր, թարգմ. Ս. Գրքաշարյանի, «Սարգիս Խաչենց» հրատ., Եր., 2001, էջ 125:

վարման արվեստին տիրապետել ձգտողների համար։ Սակայն Սոկրատեսը, խոսելով տարբեր արվեստների մասին, հստակ չի սահմանազատում դրանց ու գիտելիքների տարբերությունը։ Ավելին, «տեխնե» և «էպիստեմե» (գիտելիք) հասկացությունները Պլատոնի և ընդհանրապես հին հունական բազմաթիվ երկերում հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ։ Միայն Արիստոտելն է, որ փորձում է առաջարկել մտքի առաքինությունների դասակարգում, որտեղ «տեխնեն» (ինչ-որ բան անելու կարողությունը կամ հմտությունը) սահմանազատվում է «էպիստեմեից»՝ նախորդելով նրան[5]։ Հին հույները «տեխնե» բառով նշում էին ոչ միայն արհեստները՝ հյուսնություն, նավաշինություն, վարսավիրություն և այլն, այլև հռետորությունը, քերականությունը, ճարտասանությունը։ Դիոնիսոս Թրակացու «*Տեխնե գրամմատիկե» («Քերականության արվեստ»)* աշխատությունը հայերեն է թարգմանվել դեռևս V դարում՝ հիմք դառնալով հայերենի ուսումնասիրության և հայ քերականագիտական մտքի զարգացման համար[6]։ Տեխնեն ընկալելով որպես արվեստ՝ հին հույները փիլիսոփայությունը համարում էին արվեստների արվեստ՝ «*տեխնե տեխնոն*» և գիտությունների գիտություն՝ «*էպիստեմե էպիստեմոն*»[7]։

Հունարեն «տեխնե» բառից են առաջացել «տեխնիկա», «տեխնոլոգիա», «տեխնոգեն» բառերը, որոնք ստեղծվել են նշանակելու համար XX դարին բնորոշ նոր իրողությունները։ Նախորդ դարում տեղի ունեցած գիտատեխնիկական հեղափոխության արդյունքում տեխնիկան դարձել է արդի հասարակության կարևոր բաղադրիչներից մեկը։ Իսկ տեխնոլոգիաների կատարելագործումը դարձել է զանգվածային արտադրության հիմքը՝ նպաստելով զանգվածային մշակույթի առաջացմանը։ Այսօր գիտնականները խոսում են նաև տեխնոգեն հասարակության, տեխնոգեն աղետների մասին և այլն[8]։ Սակայն արդի հասարակության զարգացումները հակասում են հին հույների՝ տեխնեի՝ որպես առաքինության մասին պատկերացումներին, քանի որ այսօրվա տեխնոգեն հասարակության մեջ ոգեղեն տարրը, մարդկայնությունն ու առաքինության պահանջը երբեմն մղվում են հետին պլան՝ մշակույթի կենդանի հյուսվածքը փոխարինելով անկյանք ու անհամաչափ տեխնիկական լուծումներով։

Ներդաշնակ մտածելակերպի հետևողական մշակումը Հին Հու-

---

[5] Տե՛ս **Արիստոտել**, Նիկոմախի էթիկա, 1139b15 – 1140a20։

[6] Տե՛ս «Діонисій Ѳракійскій и Армянскіе толкователи», издалъ и изследовалъ **Н. Адонцъ**, Петроград, 1915։

[7] Գրաբարում «էպիստեմեն» թարգմանվել է որպես «մակացություն». «իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց» (տե՛ս **Դավիթ Անհաղթ**, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և ներածությունը Ս. Արևշատյանի, Եր., 1980, էջ 56)։

[8] Տեխնիկայի և տեխնոլոգիայի խնդիրների մասին տե՛ս **Тавризян Г**. Философы XX века о технике и технической цивилизации, РОССПЕН, М., 2009, **Миронов А. В.** Философия науки, техники и технологий, МАКС-Пресс, М., 2014։

նաստանում իրականանում էր կրթական համակարգի՝ «*Պայդեյայի*» շնորհիվ: «*Պայդեյան*» (հունարեն «մանուկ, երեխա» բառից) մի հասկացություն է, որ միաժամանակ նշանակում է կրթություն, ուսուցում, կրթվածություն, մշակույթ, լուսավորություն[9]: Սակայն կրթության ամեն մի համակարգ չի կարող կոչվել «Պայդեյա»: Սա այն կրթամշակութային համակարգն է, որ առաջացավ հունական դասական քաղաքպետության մեջ, որտեղ ազատ քաղաքացին հասկանում էր, որ մեծ տիեզերքի՝ կոսմոսի նմանությամբ ինքը փոքր տիեզերք է՝ միկրոկոսմ, որ կարիք ունի ինքն իր նկատմամբ հոգատարության: Այդ հոգատարությունն արտահայտվում էր ինքնամշակման, ինքն իրեն իր նպատակին նմանեցնելու ձգտմամբ: Վերներ Եգերը հունական Պայդեյային նվիրված իր հետազոտության մեջ ցույց է տալիս, որ սերունդների կրթության տևական մշակում անցած համակարգը նորանում և առավել խորքային է դառնում դրանում փիլիսոփայական տարրի գերակայության պայմաններում, Սոկրատեսի ու Պլատոնի օրոք[10]: «Պայդեյայի» համակարգում խիստ կարևորվում է փիլիսոփա-ուսուցչի, փիլիսոփա-խորհրդատուի կամ պարզապես փիլիսոփա-օրինակի դերը: Մարդը գիտակցում էր, որ պատասխանատու է այն հարցում, թե ով է դառնում ինքը, և ազատ էր ընտրելու իր ուսուցչին: Հին Հունաստանում կոնկրետ մասնագիտացումն այնքան կարևոր չէր, որքան ձգտելը ընդհանրապես հոգու և մարմնի ներդաշնակության՝ *կալոկագատիայի* (հունարեն՝ «*կալոս կայ ագաթոս*»՝ «*գեղեցիկ և բարի*» արտահայտությունից. գեղեցկությունը հիմնականում մարմնի մշակույթի նպատակն էր, բարությունը՝ հոգու): Մարմնի մշակույթի իրականացման համար հույները ստեղծել էին հատուկ դպրոցներ՝ գիմնասիոններ, որտեղ իրականացվում էր մարմնակրթությունը (հունարեն «*գիմնասիոն*»-ի արմատը «*գյումնոս*» բառն է, որ նշանակում է «մերկ», իսկ հոգնակիով՝ «գիմնասիա»՝ մարմնական վարժություններ): Սակայն Պլատոնը գտնում էր, որ միայն գիմնաստիկական վարժանքները բավարար չեն, հարկավոր է նաև մուսիկական կրթություն (հունարեն «*մուսիկե*» բառը լայն իմաստով նշանակում է ոչ միայն երաժշտություն, այլև մուսաների ստեղծագործության արդյունք, ինչպիսիք են առասպելները, ասքերը և այլն), որը ձայնի, ռիթմի, բայց ամենից առաջ խոսքի միջոցով կկրթի մարդու հոգին[11]: Ավելին, Պլատոնը գտնում էր, որ գիմնաստիկայի նպատակը ոչ այնքան ֆիզիկական ուժի զարգացումն է, որքան «*բնատուր արիության և ոգու ջերմեռանդության*»[12]: Հետևաբար, պետք չէ մտածել, որ գիմ-

---

[9] Պայդեյայի կրթական համակարգի մասին տե՛ս **Йегер В.** Пайдейя. Воспитание античного грека. Пер. с нем., Греко-лат. Кабинет Ю. Щичалина, М., 1997, **Адо И.** Свободные искусства и философия в античной мысли. М., 2002, **Драч Г. В.** Рождение античной философии и начало антропологической проблематики. և այլն:

[10] Այդ մասին տե՛ս **Йегер В.**, նշվ. աշխ.:

[11] Տե՛ս **Պլատոն**, Պետություն, 377a:

[12] Նույն տեղում, 410b:

նաստիկան դաստիարակում է մարմինը, իսկ մուսիկան՝ հոգին, իրականում երկուսն էլ, ըստ Պլատոնի, ձևավորում են հոգին: Իսկ նրանցից մեկին նախապատվություն տալը տանում է միակողմանի զարգացման. միայն գիմնաստիկական վարժանքները ծնում են չափազանց կոպտություն ու դաժանություն, իսկ միայն մուսիկական արվեստներով տարվելը առաջացնում է ավելորդ փափկամտություն ու նրբակյացություն[13]:

Հասկանալի է, որ այսպիսի համակարգի հետևելը ենթադրում էր ներքին նպատակամղված աշխատանք: Այս կրթական համակարգի հիմքը փիլիսոփայությամբ դաստիարակվելու գաղափարն էր, ըստ որի՝ թեև գիտակությունը կարևոր էր, սակայն ավելի կարևոր էր իմաստությունը: Եվ փիլիսոփայությամբ կրթված անձնավորությունը տարբերվում էր մյուսներից ոչ միայն գիտելիքների հանրագումարով, այլև նրանով, որ իրեն հասանելի էին ճանաչողության համընդհանուր սկզբունքները: «*Պլատոնի կրթական համակարգը ի վերջո բերում էր դեպի իսկական մշակույթ, դեպի Պայդեյա՝ բառի բուն իմաստով, այսինքն՝ դեպի անձնավորության ներդաշնակ զարգացում, որի գագաթնակետը իմաստության՝ որպես ապրելու արվեստի ձեռքբերումն էր*»[14]:

Հին Հռոմն աշխարհին տվել է «*կուլտուրա*» բառը, որը սովորաբար բացատրվում է «*կուլտ*»՝ «պաշտամունք» արմատից սերած: Սակայն ռուս իմաստասեր Նիկոլայ Ռերիխը գտնում է, որ «*կուլտուրա*» բառի երկրորդ արմատը հնդեվրոպական «*ուր*» (հուր, լույս) բառն է, և հետևաբար. «*Մշակույթը Լույսի պաշտամունք է: Մշակույթը սեր է դեպի մարդը: Մշակույթը կյանքի և գեղեցկության համակցությունն է: Մշակույթը վեհ և նրբաճաշակ ձեռքբերումների համադրությունն է: Մշակույթը Լույսի զենքն է*»[15]:

Մշակույթի՝ որպես լույսի պաշտամունքի ռերիխյան այս ընկալումը հիշեցնում է հին հունական առասպելը Պրոմեթևսի մասին, որի մի հետաքրքրական պատում կա *Պլատոնի «Պրոտագորաս»* երկխոսության մեջ: Ըստ դրա՝ աստվածները ստեղծել էին մարդկանց ու կենդանիներին հողի և կրակի խառնուրդից, սակայն վերջինները դեռևս լույս աշխարհ չէին եկել: Դրա համար աստվածները Պրոմեթևսին (կանխամտածողին) ու նրա եղբայր Էպիմեթևսին (հետո մտածողին, հետին խելք ունեցողին) հրահանգում են այդ էակներին օժտել ունակություններով, որպեսզի նրանք կարողանան գոյատևել: Էպիմեթևսը Պրոմեթևսին խնդրում է թույլ տալ, որ ինքն անի ունակությունների բաշխումը՝ հետո ստուգելու պայմանով: Պրոմեթևսը համաձայնում է: Էպիմեթևսը «*որոշ էակների տալիս է ուժ առանց արագության, իսկ թույլերին տա-*

---

[13] Տե՛ս նույն տեղը, 410d:

[14] **Адо И.,** նշվ. աշխ., էջ 11:

[15] **Рерих Н. К.** О культуре. http://www.icr.su/rus/family/nkr/about_culture/culture.php?print=yes

լիս է արագություն, որպեսզի փրկվեն»[16], ոմանց զինում է, մյուսներին՝ տալիս թևեր, ոմանց թաքցնում է գետնի տակ, մյուսներին՝ ջրերում, ոմանց տալիս է մորթի, մյուսներին՝ թույն և այլն, և այլն: Էպիմեթևսն այնպես է բաշխում կենսական կարողությունները, որպեսզի որևէ տեսակ չվերանա: Սակայն նա այնքան է ոգևորվում այդ հատկությունները բաժանելիս, որ մարդ էակի համար ոչինչ չի պահում: Պրոմեթևսը գալիս է ու տեսնում, որ մյուս բոլոր կենդանիները հարմարված, «տնավորված» են, և միայն մարդն է «*մերկ ու բոբիկ, առանց անկողնու և զենքի*»[17]: Պրոմեթևսը որոշում է գողանալ «*գեղարվեստական իմաստությունը*» և կրակը աստվածների կացարանից ու տալ մարդկանց: Եվ մարդիկ այդուհետ կարողանում են գոյատևել իրենց տրված իմաստության շնորհիվ: Արդ, դա է պատճառը, որ բոլոր կենդանիներից միայն մարդիկ են պաշտում աստվածներին ու կառուցում տաճարներ, քանի որ Պրոմեթևսի շնորհիվ հաղորդակցվել են աստվածային իմաստությանը:

Պլատոնից մեջբերած այս պատումում ուշադրության արժանի երկու հանգամանք կա: Նախ՝ մշակույթի ու պաշտամունքի կապի գաղափարը, որի մասին խոսում են նաև արդի մտածողները: Օրինակ՝ ռուս իմաստասեր Ն. Բերդյանն ասում է. «*Մշակույթը կապված է պաշտամունքի հետ, այն զարգանում է կրոնական պաշտամունքից: Մշակույթը պաշտամունքի տարբերակման (դիֆերենցիացիայի) հետևանք է, դրա բովանդակության բազմակողմանի ծավալման արդյունք*»[18]: Իսկ մայրական գծով հայ, ռուս հոգևորական Պ. Ֆլորենսկին գտնում է, որ այսօրվա մարդը կորցրել է անցյալի մարդու իսկական մշակույթը, այն է՝ «*աստվածագործումը (թեուրգիան), որը մարդկային կյանքի կենտրոնական՝ իրականությունը լիովին իմաստավորելու, դրանում իմաստը լիակատար կերպով իրագործելու խնդիրն էր*»[19]: Թեուրգիան, ըստ Ֆլորենսկու, բոլոր գիտությունների և արվեստների մայրական գիրկն էր, մարդու կենսագործունեության աղբյուրը և ինքնագիտակցության զարգացման պայմանը: Գործունեության բոլոր ձևերը սկիզբ էին առնում դրանից, և դրանից դուրս դիտարկվում էին որպես թեթևամիտ ու մակերեսային: Իսկ երբ մարդկային գործունեության միասնականությունը սկսեց կազմալուծվել, և թեուրգիան վերածվեց լոկ ծիսական գործողությունների, ի հայտ եկավ արևմտաեվրոպական հումանիտար քաղաքակրթությունը, որը, Ֆլորենսկու կարծիքով, նախաստեղծ մարդկային մշակույթի մայրամուտն է և մոտալուտ մահը[20]: Նա եզրակացնում է. «*Թեուրգիան իսկական մարդկայնության հատիկն է, ոգեղեն*

---

[16] **Պլատոն**, Պրոտագորաս, 320d:

[17] Նույն տեղում, 321d:

[18] **Бердяев Н. А.** Смысл истории. Опыт философии человеческой судьбы, «Обелиск», Берлин, 1923, с. 255.

[19] **Флоренский П. А.** Собрание сочинений. Философия культа. «Мысль», М., 2004, с. 57.

[20] Տե՛ս նույն տեղը:

ամբողջականության բողբոջը, մշակույթի կոկոնը, պաշտամունքը՝ բառի նեղ իմաստով»[21]:

Պրոմեթևսի առասպելի պլատոնյան շարադրանքում առկա է ոչ պակաս կարևոր ևս մեկ՝ մարդու՝ որպես նախնական ուղղվածություն չունեցող «անտուն» էակի գաղափարը, որը XX դարում փիլիսոփայական մարդաբանության մեջ դարձավ հատուկ ուսումնասիրության առարկա: Այդ ուղղության հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ Առնոլդ Գելենը, պնդում է, որ մարդը ստեղծել է մշակույթ, քանի որ բնական էակների շարքում ամենավատ հարմարված էակն է և չունի որևէ հատուկ կարողություն, բացի իր բանականությունից: Նա գրում է. «*Եթե ևս մեկ անգամ մարդուն համեմատենք կենդանու հետ, կպարզվի, որ մարդը անբավարար, թերի էակ է, ինչը նկատել է դեռևս Հերդերը: Մարդը չունի ոչ միայն մազածածկույթ և վատ եղանակից բնական պաշտպանվածություն, այլև թշնամական բնությունից պաշտպանվելու օրգաններ, լինի զրահ, թե փախչելու մասնագիտացված ունակություն: Չունի նաև հարձակման որևէ չափով արտահայտված օրգաններ և բնական զենք, զգայարանների սրությունը սահմանափակ է և միանգամայն զիջում է կենդանիների շրջանում այս կամ այն զգայության «մասնագետներին»: Դա նշանակում է նաև բնազդների՝ կյանքի համար վտանգավոր անբավարարություն*»[22]: Գելենը եզրակացնում է, որ բնական տարերային պայմաններում, եթե մարդուն դիտարկենք միայն իր օրգանների հնարավորությունների տեսանկյունից, նա պետք է վաղուց արդեն ոչնչացված լիներ՝ ապրելով ամենավախկոտ ճարպիկ կենդանիների ու ամենավտանգավոր գիշատիչների կողքին:

Եթե կենդանիները օժտված են վախով, որը գոյությունը պահպանելու գործիք է նրանց համար, ապա հռոմեացի հանրահռչակ քաղաքական գործիչ, հռետոր և փիլիսոփա Ցիցերոնն իր երիտասարդ բարեկամներին հորդորում է ազատվել վախից փիլիսոփայության օգնությամբ: Նա «Տուսկուլանյան զրույցներ» տրակտատում առաջին անգամ օգտագործում է «*կուլտուրա անիմի*» արտահայտությունը՝ մեկնաբանելով այն հետևյալ կերպ. «*Ինչպես բերքատու դաշտն առանց մշակման բերք չի տա, այնպես էլ հոգին: Իսկ* ***հոգու մշակումը («կուլտուրա անիմի»)*** *հենց փիլիսոփայությունն է: Այն արմատախիլ է անում հոգու արատները, պատրաստում է հոգիները սերմերը ընկալելու, և ցանում է միայն այն սերմերը, որոնք լինելու են բարեբեր*»[23]:

Ցիցերոնն այդ երկը հասցեագրել է Մարկուս Յունիուս Բրուտոսին, որը, ինչպես հայտնի է, մասնակցել է Հուլիոս Կեսարի սպանությանը՝ ըստ ամենայնի ընդդիմանալով վերջինիս բռնակալական նկրտումնե-

---

[21] Նույն տեղում, էջ 58:

[22] **Гелен А.** О систематике антропологии // Проблема человека в западной философии. М., «Прогресс», 1988, с. 175.

[23] **Цицерон Марк Туллий**, Избранные сочинения. М., 1975, с. 252.

ին ու պաշտպանելով հանրապետությունը: Ցիցերոնն իր բարեկամին հորդորում է չվախենալ, լինել քաջ և արիությամբ տանել ճակատագրի հարվածները՝ փաստարկելով հետևյալ կերպ. «…*Նկատիր, որ թեպետ հոգու բոլոր լավ որակները անվանվում են առաքինություններ, այդ բառը վերաբերում է ոչ թե բոլոր առաքինություններին, այլ դրանցից ամենակարևորին: Չէ՞ որ* ***virtus*** *բառը ծագում է* ***vir*** *(այր) բառից, իսկ այրի առաջին որակը արիությունն է …*»[24]:

Լատիներեն «*virtus*» բառում առկա է երկու կողմ. *ունակություն-արվեստը և արիություն-առաքինությունը,* և արդի լեզուներում նկատում ենք այդ կողմերից մեկի կամ մյուսի շեշտադրումը: Օրինակ՝ ռուսերեն «*виртуоз*» նշանակում է մեծահմուտ, ինչ-որ հմտության կատարելապես տիրապետող, իսկ անգլերեն «*virtue*» նշանակում է բարոյական գերազանցություն ունեցող, առաքինի[25]: Ցիցերոնի հիշատակած «*virtus*»-ն արտացոլված է նաև հայերեն «*առաքինություն*» բառում, որի բացատրությունն ըստ Հր. Աճառյանի Արմատական բառարանի հետևյալն է.

«Առաքինի - «կտրիճ, քաջ, 2. բարեպաշտ, հոգով մաքուր»

- Արմատն է առաքէն, ի մասնիկ է,
- αρετη (արետէ) «ոյժ, զորութիւն, առաքինութիւն»,
- այր բառի սեռ. առն ձևից, այր «քաջ, արի» բառից՝ -գին մասնիկով»[26] :

Պարզ է, որ «առաքինի» հայերեն բառը լատիներեն «*վիրթուսի*» նմանությամբ կազմվել է «*այր*» արմատից՝ ցույց տալով, որ մարդկային մշակույթում հոգու առաքինություններն իրենց սկիզբն են առնում առնականությունից, քաջություն-արիությունից: Իսկ ցավի ու մահվան վախը հաղթահարելը, ըստ Ցիցերոնի, ամենակարևոր առաքինությունն է, որին կարելի է հասնել նպատակամղված ինքնամշակման շնորհիվ: Հետաքրքրական է, որ հռոմեացի արժանապատիվ այրերին այդ հարցում օգնելու համար Ցիցերոնը ստիպված է բերել գլադիատորների օրինակը. «*Ահա գլադիատորները, որոնք կամ հանցագործներ են, կամ բարբարոսներ, բայց ինչպես են տանում հարվածները: (…) Եղե՞լ է դեպք, որ նույնիսկ միջակ գլադիատորը տնքա կամ դիմախաղը*

---

[24] Նույն տեղում, էջ 262: Հետաքրքրական է Ցիցերոնի երկի անգլերեն թարգմանչի հետևյալ դիտարկումը. «*vir-ը* վերաբերում է առնական հատկանիշներով օժտված տղամարդուն, այնինչ homo-ն ընդհանուր եզրույթ է, որ վերաբերում է բոլոր տղամարդկանց՝ առնական լինեն, թե ոչ» (Cicero's Tusculan Disputations, Translated with an Introduction and notes by A. P. Peabody, "Little, Brown and Co.", Boston, 1886, 118 էջի տող. ծան.):

[25] Ցիցերոնի երկերն անգլերեն թարգմանելիս դժվարություն է առաջանում, թարգմանիչը խոստովանում է. «Ես virtus-ը թարգմանել եմ virtue, ինչպես ընդունված է, բայց որոշակի դժկամությամբ, քանի որ անգլերեն բառը հազիվ թե արտահայտի կոպիտ առնականություն, ինչպես Ցիցերոնի տեքստում է» (տե՛ս **Graver M.**, About the Translation // Cicero on the Emotions, Tusculan Disputations 3 and 4, The Univ. of Chicago Press, Chicago and London, 2002, էջ xxxviii):

[26] **Հր. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա, Եր., 1971:

փոխի: Նրանք ոչ միայն կանգնում են, այլև ընկնում են արժանապատվորեն, և ընկնելով երբեք չեն թաքցնում իրենց կոկորդը, եթե հրամայված է ընդունել մահացու հարվածը: Ահա թե ինչ է նշանակում վարժությունը, ուսումը, սովորույթը»[27]: Եվ Ցիցերոնը եզրակացնում է, որ եթե դա այդպես է «*բարբարոս*»* գլադիատորների պարագայում, ապա թույլ կտա՞ արդյոք փառքի համար ծնված այրը, որ իր հոգին մնա թույլ, չամրացած վարժանքով ու խորհրդածություններով:

Ցիցերոնն այնուհետև շարունակում է, որ արժանապատիվ այրը պետք է ձգտի իր հոգում մշակել այնպիսի հատկություն, որը հնարավորություն կտա ապրելու թե՛ բարոյական, թե՛ երանելի կյանք: Իսկ դա առաքինությունն է, որը օգնում է դառնալու ինքնաբավ, ամուր և անվախ[28]: Սա «*հումանիթասի*»՝ մարդկային արժանապատվության ցիցերոնյան ընկալումն է, որտեղ, հետևելով իր հույն մեծ ուսուցիչներին, Ցիցերոնն ամենակարևոր տեղը հատկացնում է փիլիսոփայությանը. «*Օ՜ փիլիսոփայություն, հոգիների առաջնորդ, առաքինությունները հայտնաբերող, արատները վանող: Ի՜նչ կլիներ առանց քեզ ոչ միայն ինձ հետ, այլև ողջ մարդկային սեռի: Դու ծնել ես քաղաքներ, դու երկրի վրա ցրված մարդկանց միավորել ես հասարակության մեջ, դու սկզբից նրանց միավորել ես տներով, այնուհետև՝ ամուսնական կապով, և վերջապես՝ լեզուների ու գրերի ընդհանրությամբ: Դու հայտնաբերել ես օրենքները, դարձել կարգ ու կանոնի և բարոյականության դաստիարակ, մենք քեզ ենք դիմում դժվարին կացության մեջ և քեզանից ենք սպասում օգնություն...»*[29]:

Ինչ խոսք, Ցիցերոնի այս մոտեցումը «անհույս իդեալիստական է (hopelessly idealistic)», ինչպես նրբորեն նկատում է Մ. Ռայթը՝ այնուամենայնիվ ստիպված լինելով համաձայնել, որ թե՛ Ցիցերոնը, թե՛ Կատոնը և թե՛ Բրուտոսը ոչ միայն երազում էին, այլև իրականում փորձում էին իրականացնել *հումանիթասի* գաղափարները և ի վերջո իրենց կյանքը նվիրաբերեցին հանրապետությանը[30]: Փիլիսոփայության՝ որպես հոգու բարձրագույն մշակույթի հանդեպ Ցիցերոնի այս ակնածանքը շարունակությունն է պլատոնյան այն ավանդույթի, ըստ որի՝ աստվածների կողմից մարդկանց տրված լավագույն շնորհը փիլիսոփայությունն է[31]: Դարեր անց հունահռոմեական այս ավանդույթը ժա-

---

[27] **Ցիցերոն**, նշվ. աշխ., էջ 250:

* Այսինքն՝ մշակույթ չունեցող, անմշակ:

[28] Նույն տեղում, էջ 337:

[29] Նույն տեղում, էջ 325:

[30] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Wright, M. R.,** Cicero on Self-Love and Love of Humanity in De Fininbus 3 // Cicero the Philosopher. Twelve Papers. Edited and Introduced by J. G. F. Powell, Clarendon Press, Oxford, 1995, էջ 193:

[31] «Այստեղից ծագեց փիլիսոփայությունը, որից առավել մեծ բարիք աստվածները մարդկային ցեղին ո՛չ երբևէ տվել են, ո՛չ էլ երբևէ կտան» (**Պլատոն**, Տիմեոս // **Պլատոն**, Երկեր չորս հատորով, հատոր III, Հին հունարենից թարգմանեց և ծանոթագրությունները գրեց Ս. Ստեփանյանը, Եր., 2011, էջ 130):

ռանգում են նաև հայ մտածողները, որոնցից Դավիթ Անհաղթը ցանկացած զբաղմունք փիլիսոփայության համեմատ նվազ կարևոր ու երկրորդական է համարում[32], իսկ Առաքել Սյունեցին իմաստասիրությունը ներդաշնակորեն արժևորում է քրիստոնեական աշխարհընկալման ծիրում՝ գրելով. «*Այսպես մի է իմաստասիրութիւնս և աննման, որպէս ասէ Սողոմոն գեղեցկագոյն քան զդիրս աստեղաց և ընդ լուսոյ համեմատել առաւել գտնի: Երկրորդ՝ զի լուսատու է իմաստութիւնն. վասն որոյ ասէ. լուսաւոր և անթառամ է իմաստութիւն: Երրորդ՝ դեղթափ է, վասն որոյ ասէ, կենաց հաղորդութիւն ունի ընդ Աստուծոյ: Չորրորդ՝ զի անդին է, վասն որոյ ասէ, ամենայն որ պատուական է չարժէ զնա: Հինգերորդ՝ զի սիրական է, վասն որոյ ասէ, ամենեցուն Տէրն սիրեաց զնա: Վեցերորդ՝ զի բազմաց ցանկալի է, վասն որոյ ասէ ցանկացող եղէ գեղոյ նորա: Այս ամենայն պայծառութիւնս գոյ իմաստասիրութիւնն*»[33]: Առավել խորացնելով այս մոտեցումը՝ Սյունեցին այնուհետև նշում է, որ մարգարեներից առաջ աստվածային իմացությանը հաղորդակից են եղել իմաստասերները. «*Զի գալոց էր վերին անճառական շնորհն յաշխարհ, վասն որոյ շառաւիղ լուսոյն նախ ծագեաց յիմաստասէրսն*»[34]: Տեսնում ենք, որ հայոց մտածելակերպում փիլիսոփայության՝ որպես հոգու մշակույթի ընկալումը չի կորցնում իր լեգիտիմացումը նաև միջին դարերում, ավելին՝ հայ միջնադարյան մտածողները դիմում են փիլիսոփայությանը՝ դավանաբանական պայքարում իրենց ընտրությունը և հայոց մշակութային ինքնատիպությունը հիմնավորելու համար[35]: Իսկ այսօր փիլիսոփայական խորհրդածություններն ու վարժանքները ոչ պակաս կարևոր են՝ անդեմ տեղեկատվական հոսքերի ճնշման տակ *ինքնանալու*[36] և սեփական ամբողջականությունն ու անվրդովությունը պահպանել կարողանալու համար:

Բանալի բառեր – *տեխնե, պայդեյա, կալոկագատիա, կուլտուրա անիմի, Սոկրատես, Պլատոն, Ցիցերոն, Խորենացի*

---

[32] «Արդ, մեր առջև փիլիսոփայությունն է, մարդկային զբաղմունքներից ամենագեղեցիկը և պատվականը, որի գոյությունը մեզ համար կասկածից վեր է: Բայց ոմանց համար, որոնք նման են գոյերի մասին դատողություն անող կույրերին, այն տարակուսելի է: Դրանց մասին է Ստագիրացին ասում, թե ի ծնե կույրերը չեն կարող դատել գույների մասին, որովհետև նրանք ի ծնե չգիտեն, թե ինչ է գույնը» (**Դավիթ Անհաղթ**, Երկեր, Եր., 1980, էջ 37):

[33] **Առաքել Սյունեցի**, Լուծմունք Յաղագս Սահմանացս Դաւթի Անյաղթ փիլիսոփայի // Գիրք Սահմանաց սրբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Հայոց իմաստասիրի, Մադրաս, 1797, էջ 154:

[34] Նույն տեղում, էջ 157:

[35] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Ս. Ս. Արևշատյան,** նշվ. աշխ., էջ 142, ինչպես նաև՝ **Ս. Ս. Պետրոսյան,** նշվ. աշխ., էջ 99-130:

[36] Խորենացու բառն է. «... այլ ուսանել զզօրութիւնս պէսպէս իմաստից ի նորն Պղատոնէ, յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ անարժան գտայ աշակերտ, և ոչ անկատար վարժմամբ ի յանգ ելեալ արուեստից՝ **ինքնացայ**» («Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 346, ընդգծումն իմն է՝ Ս. Պ.):

СИЛЬВА ПЕТРОСЯН – *Философское понимание культуры в Древней Греции и Риме.* – В статье анализируется ряд понятий (*техне, пайдейя и калокагатия)*, которые показывают, что в Древней Греции культурный человек воспринимался как микрокосм, наделённый гармонией души и тела. На примере мифа о Прометее показано, что древние греки уже рассматривали идеи культовой природы культуры. Рассмотрено также учение Цицерона о культуре души. Показано, что для Цицерона *культура Аними* – это сама философия, которая необходима для воспитания благородных и доблестных римлян. Цицерон приписывает философии большую часть достижений человеческой культуры, включая дар утешения и жизнеутверждения. Представители армянской грекофильской школы и их идейные потомки унаследовали это восприятие культуры.

Ключевые слова: *Техне, Пайдейя, Калокагатия, Культура Аними, Сократ, Платон, Цицерон, Мовсес Хоренаци*

SILVA PETROSYAN – *Philosophical Concept of Culture in Ancient Greece and Rome.* – The article is devoted to the philosophical perception of culture in Ancient Greece and Rome. The author analyzes some concepts, such as *Techne, Paideia*, and *Kalokagathia*, which show that in Ancient Greece the cultural human was perceived as a microcosm, a harmoniously educated being endowed with the harmony of soul and body. The myth of the Prometheus told in Plato's "Protagoras" is also analyzed to show that the ancient Greeks were already thinking of the culture as a service to gods, and regarded the human being as a bad-adapted to nature animal. The article also presents Roman speaker, legislator, politician, and philosopher Cicero's doctrine on the culture of the soul. It is shown that for Cicero, *Cultura Animi* is the philosophy itself, and the process of educating and cultivating noble Romans should be led by philosophy, the mother of virtues. Cicero attributes much of the achievements of human culture to philosophy and treats it as a consolation and a life-sustaining culture free of fear. Representatives of the Armenian philhellene school and their descendants inherit this culture, appreciating the wisdom and its importance in the process of developing identity.

Key words: *Techne, Paideia, Kalokagathia, Cultura Animi, Socrates, Plato, Cicero, Movses Khorenatsi*

Ներկայացվել է՝ 10.01.2020
Գրախոսվել է՝ 10.02.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020